№ 146 Օգոստոսի 8 (20) 1881 Օգոստոսի 8 (20) № 146

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաքլիսայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Գամբէտտայի ճառը։ Նամակ Թիւրքիայից։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Երբ Եւրոպայում ստացվեցաւ լուրը թէ Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ Գարֆիլդի վրա ատրճանակ արձակվեցաւ, շատերը մտածեցին որ Գիտօ մարդասպանը անպատճառ սոցիալիստ պէտք է լինի։ Ուրեմն, ասում էին ամենքը, սոցիալիստները կամենում են համաշխարհային անիշխանութիւն։ Նրանց համար մի և նոյն է թագաւոր լինի թէ հանրապետութեան նախագահ, բաւական է որ մարդ իշխանութիւն ունի ձեռքում,—և նրանք վճռել են ամենքին սպանել, ով որ իշխանութեան ներկայացուցիչ է։

Մի քանի ժամանակից յետոյ լուր ստացվեցաւ թէ Գիտօ խելագար է։ Բայց այդ լուրն էլ շուտով հերքվեցաւ։ Եւ ահա ըսկսվեցան զանազան ենթադրութիւններ այն շարժառիթների մասին, որոնք դրդեցին մարդասպանին ձեռքը բարձրացնել Ամերիկայի հանրապետութեան նախագահի վրա։

Ամերիկայի հանրապետութեան փոխնախագահ պ. Արշէր իրլանդացի է և եթէ Գարֆիլդ սպանված լինէր, փոխնախագահը պէտք է բռնէր նրա տեղը և կառավարէր երկիրը մնացած երեք տարի շարունակ։ Նախագահը ընտրվում է չորս տարով և եթէ այդ ժամանակամիջոցում մեռնի, նրա տեղը առանց նոր ընտրութեան մինչև ընտրողական ժամանակամիջոցի լրանալը փոխնախագահն է բռնում։

Եւ ահա սկսվեցան նոր ենթադրութիւններ. երևի ասում էին, Գիտօ իրլանդական կուսակցութեան գործիք է և յանձն առաւ նախագահի սպանութիւնը Արշէրին նրա տեղը նստացնելու համար, որպէս զի Ամերիկան, այն ժամանակամիջոցում, երբ Անգլիայում վճռվում է իրլանդական խնդիրը, իրլանդացիներին համակրէր և ոչ թէ Անգլիային, գուցէ ձնշում ներգործելով Մեծ-Բրիտանիայի կառավարութեան վրա իրլանդական հարցի յօգուտ իրլանդացիների վճռելու մէջ։

Բայց շուտով յայտնվեցաւ որ այդ ենթադրութիւնները, որքան էլ հաւանական երևային, հիմնովին սխալ էին։ Յայտնվեցաւ որ եղեռնագործը պաշտօնեաների, բիւրոկրատիայի կուսակցութեան է պատկանում և իր յանցանքը գործեց դրդված լինելով բոլորովին իր անձնական և իր դասակարգի շահերից։

Յայտնի է որ ամերիկական հանրապետութեան կառավարութիւնը հիմնվում է ընտրողական սկզբունքի վրա, բայց ժողովրդից ընտրված կառավարողական իշխանութիւնը իր կողմից իրաւունք ունի նշանակել ադմինիստրացիայի, վարչութեան պաշտօնեաներին։ Ահա այդ պաշտօնները ձեռք բերելու մէջ կատարվում են ամեն տեսակ զեղծումներ և նոյն իսկ պաշտօնեաների դասակարգի մէջ զեղծումները, անիրաւութիւնները և կաշառակերութիւնը անպակաս են։ Ամեն տեսակ բաղդախնդիրներ, որոնք չաջողվեցան ոչ մի ուրիշ գործի, պարապմունքի, արհեստի մէջ, ձգտում են այլ և այլ պաշտօնական տեղերին, զանազան նենրելի և աններելի միջոցներով որսում են ազատ տեղերը, ինտրիգաներ են անում եղած պաշտօնեաներին իրանց տեղերից զըրկելու և նրանց տեղը բռնելու։

Գարֆիլդ նախագահը, իր ընտրութեան օրից, յայտնվեցաւ բացարձակ թշնամի բաղդախնդիր, կաշառակեր պաշտօնեաների, շատ դժուարութեամբ և մեծ ընտրութեամբ էր բաժանում վարչական այլ և այլ պաշտօնները։ Գիտօ եղեռնագործը այդ տեսակ բաղդախնդիրներից մէկն է։ Նա մի ժամանակ եւրոպական քաղաքներից մինում ամերիկական հիւպատոսի պաշտօնակատար էր, յետոյ զրկվեցաւ այդ պաշտօնից։ Գարֆիլդ դեռ նախագահ չընտրված, նա աշխատում էր պարտաւորեցնել նրան, որ անպատճառ նշանակի իրան ամերիկական հիւպատոս Ֆրանսիայում, Մարսէյլ քաղաքում։ Բայց Գարֆիլդ, նախագահ ընտրվելուց յետոյ, չը կատարեց նրա խնդիրքը, ոչ մի տեղ չը նշանակեց նրան հիւպատոս, ոչ մի ուրիշ պաշտօն էլ չը տուեց նրան։ Եւ ահա դրանից ծագեց ոխ և վրէժխնդրութիւն։ Սպանութեան փորձի դրդիչ պատճառը, ուրեմն կատարելապէս անձնական շահ էր։

Ամերիկայի պետական կազմակերպութեան մէջ կայ դարձեալ մի մեծ սխալ, մի մեծ անյարմարութիւն. պաշտօնները, որոնք կառավարական իշխանութեան նշանակութեամբ են տրվում, դարձեալ թւով շատ մեծ են։ Շատերը այն կարծիքն են յայտնում, որ պէտք է աշխատել, որքան հնար է, սահմանափակել այն պաշտօնները, որոնք վարչութեան նշանակութեամբ են ստացվում և որքան հնար է ընդարձակել այն պաշտօնները, որոնք ձեռք են բերվում ընտրողական հիմունքի վրա։ Այդպիսով միայն սանձ կը դրվի ինտրիգաներին, կը թուլացվեն այն դժգոհութիւնները, որոնք Ամերիկայում իրանց սկիզբ են առնում պաշտօնեաների դասակարգի, բիւրոկրատիայի մէջ։

Ինչպէս երևում է դժգոհութիւնը ամեն տեղ նոյն զզուելի միջոցներ է գործ դնում և բիւրոկրատիան, որ ուրիշ երկիրներում ազգերի ամենապահպանողական մասն է կազմում միշտ, որովհետև ոյժը նրա ձեռքումն է, Ամերիկայում, որտեղ նա թոյլ և իրաւունքներից զուրկ է, դիմում է նոյն դատապարտելի, հրէշաւոր միջոցների, սպանութեանը, որին ուրիշ երկիրներում դիմում են պետութեան զոյութեան թշնամիները, անարխիստները։ Այդպիսով Ամերիկայում պետութեան կազմակերպութեան, նրա կանոնաւոր խաղաղ զարգացման ամենակատաղի թշնամիները, անարխիայի սկզբունքի ներկայացուցիչները, — բիւրոկրատներն են։ Իսկ պահպանողականները այդ երկրում՝ հանրապետականներն են։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ

—

Յուլիսի 18-ին

«Մշակի» № 109 հրատարակած Մեծ-Ղարաքլիսի Նամակը, որի մէջ խիստ անտեղի դրպարտութիւններ են բարդվում տեղական դպրոցների հոգաբարձուաց և ուսուցչաց վրա, բաւական վատ տպաւորութիւն գործեց թէ վերջիններիս և թէ ժողովրդի վրա։ Նամակագիրը ձևացնելով իրան հասարակութեան բարեկամ և ծածկելով թանձր քօղի տակ իր սրտում ամբարված կիրքը և սև նախանձը, այնքան խորամանկութեամբ է խօսում, որ նրա բնաւորութեանը և հանգամանքին անծանօթ մարդը անշուշտ կը հաւատայ և արած թշնամութիւնը բարեկամութիւն կը համարէ. և այսպէս, նա սկսելով երկպառակութեան և ատելութեան սերմ ցանել ժողովրդի, ուսուցիչների և հոգաբարձուների մէջ, սառնացնելով գործող անձանց պարտաւորութիւններ կատարելու մէջ, ժպտում է ինքը, և ինչպէս երևում է չարունակելու է իր զրպարտութիւնները դիզել, դեռ երկար ժամանակ, մինչև կը յագեցնի իր ոչ մի օրինաւոր փաստի վրա չը հիմնած կիրքը, որով առաջին քայլն անելով երկպառակութեան և վրէժխնդրութեան մէջ, չինելու պատրուակով խանգարելու է շատ բան ի վնաս հասարակական օգտի, որ պատիւ չէ անում ոչ իրան թղթակցին և ոչ լրագրութեան, որ անբաղդութիւն է ունեցել այդ տեսակ մոլի և բաղդախնդիր թղթակիցներին պատահելու, որոնք թշնամութիւնից գործին նայում են վատ կողմից, խոչորացուցով։ Թէ որքան վնաս է մեր դպրոցներին,—եթէ այդ պարոն թղթակցի նամակները, հակառակ նրանց համար գործող անձանց, որոնք նայելով չրջապատող հանգամանքներին բաւականին բարեխղճութեամբ են վարում պարտաւորութիւնները,— այդ արդէն պարզ է. անխղճութիւն է խաղալիք չինել հասարակական օգուտները մի բաղդախնդիր մարդու և գերի չինել նրան մի ամբողջ հասարակութիւն իր գործիչներով որ կրքից կուրացած խռովութիւն է ցանում այս և այն լրագրում զանազան անուններով ծածկված։ Արհամարհանքով նայելով թոյլ տալ որ ինչ կուզեն գրեն, դժուար է տանել և ընթերցող հասարակութիւնը կը դատապարտէ. պատասխանել ամեն մի ցանցառ զրպարտութեանց, պէտք է բան ու գործ թողած դրանով պարապել։ Յետոյ։

Թղթակիցը չէ հասկանում թէ ում, երբ և ընչու համար է մտրակում. նա պէտք է կշռէր, թէ մտրակելով օգուտ է տալիս թէ վնաս, գործել է տալի թէ վատեցնում է,—նա այնքան անագնիւ է գտնվում, որ թոյլ է տալիս իրան անպատուել հոգաբարձուաց և ուսուցչաց, «անխիղճ, խաբեբայ, ազգի դառն քրտինքով վաստակած փողերը լափող, միամիտներին խարդախ ճանապարհով խաբող» բառերը չռայլել, աւելացնելով «Մի օր դպրոցը մնանկացած կը հրատարակվի». այ քեզ սուտ և անհիմն փաստերի վրա հիմնած մարգարէութիւն։ Ո՛վ որ փոքր ի չատէ ծանօթ է մեր հոգաբարձուների և ուսուցիչների հետ և վերջիններիս ստացած ռոճկի քանակութեան հետ, կարդալով այդ խօսքերը, գրողին խելքից զրկված կը համարէ. նա հազար (իբր) իրան յայտնի փուչ օրինակներից, ընտրում է երկու դատարկը, որի դէմ, ձեզ, պ. խմբագիր, նեղութիւն եմ տալիս յայտնելով. թէ մեր դպրոցը սկսվելով 1853 թուականում, մինչև 1862 թ. ոչ մի կոպէկ դրամագլուխ չէ ունեցել, որը կառավարելով մի ուսուցիչ, ստացել է տարեկան 120 ռուբլու չափ, որի մի մասը տուել են աշակերտատէրերը, իսկ միւսը լրացրել են դպրոցի բարերար Գ.. և Մ. Խան-Աղեանները, իրանց սեփականութիւնից։ 1862 թ. հանգուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի բարեհաճութեամբ յատկացրած է դպրոցին եկեղեցական գումարից 2500 ր. դրամագլուխ, որից ստացած 300 ր. տարեկան տոկոսով, մինչև 1877 թ. վերատեսչութեամբ Մ. Խան-Աղեանցի, ոչ միայն պահուել է 2 ուսուցիչ, այլ և 500 ր. աւելացնելով գնված է դպրոցի համար մի տեղ, ընդարձակ յարմարաւոր սենեակների պատերով, որ արժէ մինչև 3000 ր. և այդքան ժամանակամիջոցում վերատեսուչը հասարակութիւնից ընտրուած հաշուապահաց հետ ամեն տարի հաշիւ է ներկայացրել հոգեոր իշխանութեանը։ 1877 թուականից դպրոցի վարչութիւնը յանձնված է ներկայ հոգաբարձութեանը որ նոյնպէս մանրամասն հաշիւ է ներկայացրել ում հարկն է ամեն տարի, և այս վերջինը ոչ երկար ժամանակամիջոցում, թղթակցից ծաղրած և մեղադրված հոգաբարձութիւնը, նուիրատուութեան ձեռքով չինել է բաւականին ընդարձակ դպրոցական տուն, բացել է օրիորդական դպրոց, առանձին աղբիւր գտնելով կառավարելու համար, և դպրոցական դրամագլուխը՝ պ. Ա. Թահիրեանցի 4000 ր. դրամներով, հասցրել է մինչև այսօր 8650 ր.։ Եւ այս բոլոր հաշիւը այնքան պարզ է, որ ցանկացողը և ձեր թղթակիցը կարող է մի քառորդ ժամում ստուգել երբ կամենայ, հոգաբարձութեան մօտ գտնված պատճէնական տումարից։

Հոգաբարձուներին մեղադրել, թէ ինչի չեն հրաժարվում իրենց պաշտօնից, անարդարութիւն է. դա հասարակութեան գործն է, նրանք ուրախութեամբ կը հրաժարվէին եթէ հասարակութիւնը կամենար։ Այս մասին մօտ օրերումս ըստուգեց և թեմական տեսուչ պ. Պռօշեանցը։

Գիւղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 5 օգոստոսի

Ցեղուոյս հայ և ռուս լրագիրներում մեր Թիֆլիսի հիւսների (столяръ) վրա ոչ ոք ոչինչ չէ խօսել, բայց ես աւելորդ չեմ համարի, այսուհետև իմ կարողութեան չափ խօսեմ այդ դասակարգի պէտքերի մասին, և յուսով եմ որ դուք էլ, յարգոյ խմբագիր, չէք խնայի ձեր պատուական թերթի էջերում, երբեմն տեղ տալ իմ յօդուածներին։

Այժմ խօսենք առաջին նիստի վրա, որ յուլիսի 31-ին նախագահութեամբ ստարշինայի կայացաւ Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում։

Հրամանաւ նախագահ և ստարշինա Նաումէնկոյի Թիֆլիզի ամենայն հիւսները պէտք է ներկայ լինէին այդ նիստին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմք, որ այս անգամ հազիւ $^1/_3$ մասը ներկայ գտնվեցաւ. յուսով ենք որ միւս անգամ բոլորեքեան ներկայ կը գտնվեն և կը պահպանեն իրանց իրաւունքները։

Նիստը կայացաւ 7 ժամին երեկոյեան և հրամանաւ նախագահի ռուս լեզուով կարդացվեցաւ նիստի նպատակը հետեւալ բովանդակութեամբ։

«Պարոնայք. կարծեմ ձեզանից ամեն մինը տուել է իր տարեկան նշանակեալ երկու ռուբլ (ստօլի փող) իմ նախորդներին, բայց ցաւօք սրտի կը յայտնեմ որ այդ գումարը մեզ ոչ մի օգուտ չէ բերել, և թէ ուր է գնացել,— չը գիտենք։

«Ես չեմ ցանկանում նոյնը անել, ինչ որ արել են մինչև այսօր ուրիշները, թէև այսօր ես ձեր ստարշինա եմ, ձեր մեծն եմ, բայց ձեզանից ամենայն մի անհատ երբ և ինչ ժամանակ կամենայ կարող է գալ մեր վարչութեանը և ինձանից հաշիւ պահանջել, որին և ես մեծաւ ուրախութեամբ կընդունեմ։

«Իմ կարգադրութիւնները հետեւեալներն են։ 1) Այն անձը որ ինքն տէր է և իր համար սեփական քարխանայ ունի, տարեկան պէտք է տայ մեր կասային երկու ռուբլ։ 2) Այն անձը, որ ուրիշի իշխանութեան ներքոյ է (պոդմաստերիէ), նա տարեկան պէտք է տայ մի ռուբլ։ 3) Սրբեմն մեր համքարը 'ի վարձատրութիւն

ստանում է հանգուցեալների տէրերից մի գումար, որի կէսը պէտք է մտնէ մեր կասան։ 4) Ինչ տուգանքներ որ մեր վարչութիւնից առնվեն, նոյնը պէտք է կասան մտնի։

«Վերջապէս այսպիսով ժողոված գումարը երբ կը հասնի մի քանի հարիւրի, մենք կարող ենք տակաւին տալ տեղոյս բանկերում, կամ վերցնել չահաւէտ գրաւականներ։ Այսպիսով յուսով եմ որ մեր համքարը ապահով կը լինի դրամական կողմից։

«Բայց թէ արդեօք ինչ է իմ նպատակը այսպիսի մտքեր յայտնել ձեզ, ահա։ Կարծեմ ձեզ բոլորիդ քաջ յայտնի է, որ մեր համքարում կան այնպիսի արհեստաւորներ, որք չունեն դրամական միջոցներ առաջ տանելու իրանց արհեստը, վասնորոյ դիմում են ունեոր անձանց և վերցնում տոկոսով փող, որ և մեր արհեստաւորը չէ կարողանում վճարել և մնում է յաւիտեան նորա մօտ ստրուկ, բանում է օրական կէս գնով կամ իր չինած ապրանքը, կահ-կարասիքը (մէբէլ) տալիս է կէս գնով։ Ուրեմն եթէ մենք կունենանք մի կապիտալ, այն ժամանակ այդ արհեստաւորները, այլ ևս չեն դիմի ուրիշի և երկապտիկ, քառապտիկ տոկոսով փող չեն վերցնի, այլ կը վերցնեն մեր կասայից փոքր տոկոսով և իրանց կարողութեան չափ իւրաքանչիւր չարաթ կամ ամիս քիչ, քիչ կը վճարեն, ինչպէս առ հասարակ վճարում են մանաւոր կանոններում։

«Ահա պարոնայք մեր նիստի միտքը. ուրեմն համաձայն էք, թէ ոչ»։ Ամենից լավեցաւ «համաձայն ենք» խօսքը։ Վերջացնում եմ նամակը յաջողութիւն ցանկանալով պ. Նաւումենկօին այդ գործում և յուսով եմ, որ այդպիսով կազատենք մեր խեղճ արհեստաւորներին հարուստ կապիտալների սուր ճանկերից։

Գ. Շահվերդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» այսօրվայ համարը ուշացաւ և փոխանակ վաղ առաւօտեան դուրս գալու, այժմ է միայն հրատարակվում։ Այսօրվայ համարը մենք այսօր չը կարողացանք ուղարկել փոստը, մեր գաւառական բաժանորդներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Գրիգոր Նիկողոսեանի յօդուածները լաւ տպաւորութիւն են անում մեր հասարակութեան վրա։ Ուրախալի է, նոյնպէս, որ և Կ. Պոլսի հայերը իրանք սկսում են այժմ մտրակել իրանց պակասութիւնները։»

—

Դուրս եկաւ Ս. Պետերբուրգում «Новая Газета» լրագրի առաջին համարը, պ. Վ. Մոզէսովի խմբագրութեամբ։ «Голосъ» լրագրին գրված բաժանորդները կը ստանան այդ թերթը «Գոլոսի» դադարման ամբողջ ժամանակ։ «Նոր լրագիրը» իր առաջնորդող յօդուածում ասում է որ դիտաւորութիւն ունէր հրատարակվել միայն այն ժամանակ, երբ մամուլի օրէնքները աւելի որոշ և օրինական կը դառնային, չը նայելով որ խմբագրութիւնը վաղուց է որ ստացել էր թոյլատրութիւն իր թերթը հրատարակելու։ Բայց այժմ երբ «Голосъ» սոսկալի եղաւ զինաթափ մնալ, խմբագրութիւնը իր պարտաւորութիւն է համարում նրա տեղը բռնելու և պահպանելու նոյն դրոշակը, որ պահպանում էր «Գոլոսը»։ Իսկ այս դրոշակը, բացատրում է պ. Մոզէսովի, լուսաւորութեան, հայրենիքի քաղաքական, հասարակական և բարոյական վերանորոգութեան դրոշակն է։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են։ «Օգոստոսի 1-ին պ. պ. Ադամեան, Սաֆրազեան և օրիորդ Վարդանոյշ, մասնակցութեամբ թատրոնասէր պ. պ. Տէր-Գրիգորեանի և Պապոյեանի, ներկայացում տուեցին քաղաքային կլուբում Շէկսպիրի «Համլէտ» ողբերգութենից մի տեսարան և «Ընտանեկան փոթորիկ» կատակերգութիւնը։ Անտրակտներում կարդացին մի քանի բանաստեղծութիւններ Գամառ-Քաթիպայի։ Ժողովուրդ չատ չը կար։ Տեղերի գները բարձր էին նշանակված։ Ամսոյս 6-ին նոյն խումբը ներկայացնելու է «Արշակ II» ողբերգութիւնը։»

—

Ախալցխայից մեզ գրում են որ օգոստոսի 5-ին կօնսիստորիան հարամանագրել է՝ ընտրել ժողովրդի կողմից հինգ հաշուատեսներ և հոգևոր կառավարութենից երկու քահանաներ, պ. Վանցեանցի հաշիները քննելու համար և օրէնքի համաձայն արգելք դնել նրա կայքերի վրա։ Թղթակիցը աւելացնում է որ լաւ կը լինէր որ ժողովուրդը հինգ հաշուատեսներից զոնէ երեքը ընտրէր նոյն իսկ հարցը զարթեցնող պարոններից, իսկ հոգևոր կառավարութիւնից ճշմարտութիւնը պաշտպանող քահանաներին։

—

«Новая Газета» հաղորդում է որ կոմս Կուտայսով ընդունեց այս օրերս Խարկովում հրէաների մի պատգամաւորութիւն և երկար ժամանակ խօսակցութիւն ունեցաւ հրէական խնդրոյ պ. Սէգալի հետ։

—

«Русскій Курьеръ» լրագրին Թիֆլիսից գրում են. այս օրերս դադարել է «Փորձ» ամսագիրը, որ հայոց ամսագիրներից միակ փոքր ի չատէ օրինաւոր էր։ Նրա դադարման պատճառը վերաբերում են հասարակութեան անտարբերութեանը։ Խմբագրութիւնը կրեց 14,000 ռուբլի վնաս։ Պէտք է աւելացնել, ասում է ռուս թերթը, որ հասարակութեան անտարբերութեան պատճառներից մինն էլ ցենզուրական ծանր պայմաններն են։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Յունիսից ստացված տեղեկութիւնների համեմատ ամեն տեղ հանգստութիւն է տիրում։ Հաստատ խուզարկութիւններից յետոյ երևեցաւ, որ վերջին ժամանակներում տարածված երկիւղը չափազանցացրած էր։ Լա-Գուլեթի մէջ օգոստոսի 2-ին ֆրանսիական զօրքերը ափ իջան և մեծ պատուով ընդունվեցան։ Մի փոստային շոգենաւով բերեցին տունիսցի 300 փախստական զինուորներ։ Նրանք անբաւական էին երբ տեսան ֆրանսիական զօրքերին և յայտնեցին, որ նորից կը փախչին, որովհետև բէյը ֆրանսիական զօրքեր է հրաւիրել և իրանք այլ ևս նրան հարկաւոր չեն։

Մի քանի թղթակիցներից հաղորդած տեղեկութիւնների համեմատ Տունիսի մէջ արտասանած Գամբետտայի ճառը ցանկալի ազդեցութիւն չէ գործել լսողների վրա։ Ճառի արտասանելու ժամանակ մի քանիսը մինչև անգամ բողոքել են, երբ Գամբետտա ասել է, թէ անհրաժեշտ է վերաքննել սահմանադրութիւնը սենատը փոփոխելու համար։ Ներկայ եղած հասարակութիւնը պատկանում էր չափաւոր տարրերին և պատում էր Գամբետտային իբրև ֆրանսո-գերմանական պատերազմի ժամանակ յայտնված եռանդոտ ազգասէրի և ոչ թէ իբրև ներքին նշանաւոր վերանորոգութիւնների կողմնակցին։ Չափազանց ոգևորված ծափահարութիւններով ծածկվեցան Գամբետտայի ճառի այն մասերը, որոնցով նա գովում էր հանրապետութեան նախագահ Գրեվիին։ Ֆրանսիական մամուլը զանազան կարծիքներ է յայտնում Գամբետտայի ընտրողական նախագծի մասին. արմատական լրագիրները հաւանում են նրա ճառը, իսկ մի քանի մինիստերական չափաւոր լրագիրներ, որոնց թւում և „Temps“, գովում են։ Սենատի փոփոխելու մասին յայտնած մտքերը անհանգիստ են անում Գրեվիին շրջապատող հանրապետական շրջաններին։ Ինչպէս երևում է, Գամբետտա ցանկանում է, որ ֆրանսիական պատգամաւորների ժողովի ապագայ մեծամասնութիւնը արմատական ձախակողմեաններից լինի կազմված։

„République Française“ լրագիրը հաղորդում է, որ Գամբետտայի նախագահութեամբ ընտրողական մի մասնաժողով է կազմված։ Դրանից երևում է, որ Գամբետտա յանձն է առել ընտրութիւնների անմիջական առաջնորդութիւնը։ Լրագիրները շատ են խօսում այդ մասնաժողովի մասին, որ չէ յայտնում ոչ իր նախագիծը և ոչ իր անդամների անունները։ „National“ լրագրի կարծիքով, այդ մասնաժողովն էլ մի ապացոյց է, որ Գամբետտա պատրաստում է իր դիկտատուրան և որ պատգամաւորների ապագայ ժողովի մէջ կը տիրապետէ „հանրապետական միութիւնը“ Գամբետտայի առաջնորդութեամբ։ Նանտի մէջ Գամբետտա շուտով մի ճառ կը խօսի պետութիւնը եկեղեցուց բաժանելու և զինուորական հիմնարկութիւնների մասին։

Սպանիական կառավարութիւնը դանդատվեց Ֆրանսիայից, որ իր հիւպատոսի տունը Սֆակսի մէջ կողոպտված է։ Բարտելեմի Սենտ-Իլեր պատասխանեց, որ այդ գործի մասին դեռ ևս պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված և պատրաստակամութիւն յայտնեց քննել գործը և պատժել մեղաւորներին։ Արդէն մի գեներալ է ուղարկված Սֆակս քննութիւն կատարելու համար։

«Morning Post» լրագրի տեղեկութիւնների համեմատ Տունիսի մէջ ապրող անգլիական և իտալական հպատակները մի խնդրագիր են պատրաստում, որ բացի իրանց կառավարութիւններից կուղարկվի և ֆրանսիային և որով նրանք ցոյց են տալիս, թէ եւրօպացիների դրութիւնը վտանգաւոր է, քանի որ արաբները անդադար արշաւանքներ են գործում։

ԳԵՐՄԱՆԻԱ

Մի քանի գերմանական ազատամիտ լրագիրներ վերջին ժամանակներում սպառնացող անստորագիր նամակներ են ստացել, որոնք ըստ երևոյթին ուղարկված են հակահրէական շրջաններից։ Այդպիսի նամակներից մէկը, հրատարակված է „Berliner Tageblatt.“ լրագրի մէջ։ Նամակի մէջ ասված է, թէ, եթէ իշխան Բիսմարկի կեանքի դէմ որ և է փորձ լինի, մահուան պատժի կենթարկվեն թշնամի կուսակցութիւնների ներկայացուցիչները՝ առաջադէմները, ազատամիտները և հրէաները այն քաղաքի մէջ, որտեղից կը ծագի այդ յանցաւոր փորձը և որ այնուհետև մի ընդհանուր կոտորած կը սկսվի, որին զոհ կերթան կայսերական կառավարութեան թշնամի ազատամիտ գործիչները։ Այդ նամակից, որին լրագիրները ոչինչ նշանակութիւն չեն տալիս, այնու ամենայնիւ երևում է այն գրգռված դրութիւնը որի մէջ գտնվում են թշնամի կուսակցութիւնները Գերմանիայի մէջ։ Այդպիսի արիւնարբու սպառնալիքների կարելութիւնը միայն ցոյց է տալիս գերմանական ներքին գործերի չափազանց լարված դրութիւնը։

Շատ տեղերում դեռ ևս շարունակվում են հրէաների դէմ ուղղված անկարգութիւնները։ Վալդենբուրգի և Եստրովի մէջ մեծ դժուարութեամբ վերջ դրին անկարգութիւններին և դա էլ եղաւ միայն այն ժամանակ, երբ հրէաների բոլոր տները և աղօթարանները քանդված էին։

ԳԱՄԲԵՏՏԱՅԻ ՃԱՌԸ

Տուրի մէջ իր պատիւ Գամբետտայի տուած բանկետի ժամանակ նա արտասանեց հետևեալ ճառը։ „Տաս տարի սրանից առաջ, ասաց նա, թշնամուց գրաւած, գրեթէ օրհասականին հասած Ֆրանսիան ստիպված էր սաստիկ պատիժ կրել, որովհետև մի մարդու ձեռքն էր ընկել։ Այսուհետև, այս քաղաքի մէջ հրգեհներով շրջապատված ամենքը, թէ գիւղացիները, թէ քաղաքացիները, թէ արհեստաւորները հասկացան, որ ինքն իրան դաւաճանող ժողովրդի պատիժը միշտ լինում է նրա զինուորական փառքի և արտաքին ոյժի անկումը և ներքին անիշխանութիւնը։ Այդ դասը ամենքի յիշողութեան մէջ դրոշմվել է անջնջելի գծերով։ Մեր ժողովուրդը կարող է իրան աւելի բաղդաւոր համարել, որ նա վերջնականապէս չը ոչնչացաւ այդ սարսափելի դժբաղդութիւնների ժամանակ։ Բայց Ֆրանսիան, պարոններ, ես ասում եմ Ֆրանսիան և ոչ թէ այս կամ այն մարդը, դարձեալ ինքն իրան պաշտպանեց։ Նա ամրացաւ անդունդի ափին և կարողացաւ ազատվել, վերանորոգվել և նորից բռնել իր բարձր դիրքը աշխարհի մէջ։ Դրա համար նրան բաւական էր դիմել իր ազգային ոգուն և յայտնել, որ նա ճանաչում է միայն մի իշխանութիւն, մի կամք—իր սեփական կամքը։ Ամբողջ ժողովրդի այդպէս յանկարծակի կերպով արթնանալուց յետոյ ահա տասը տարի է, ինչ Ֆրանսիան հաստատ և առանց շեղվելու գնում է իր ճանապարհով, շրջապատված լինելով ներքին և արտաքին դժուարութիւններով, զանազան կուսակցութիւնների ինտրիգներով, որոնք թէպէտ յաղթված են, բայց դեռ իրանց յոյսը չեն կորցրել։ Այդ կուսակցութիւնները կազմված են եղել ամենաճարպիկ, համարձակ և ազդեցութիւն ունեցող տարրերից։ Եւ ի՞նչն է ցոյց տալիս Ֆրանսիային ճանապարհ, ի՞նչ է պահպանում նրան այս բոլոր արգելքների ժամանակ. հանրապետութիւնը, որ հասարակական ազատութեան միակ և ճշմարիտ նշանաբանն է։ Այդ ճշմարտութիւնը անհերքելի է։ Այդ բանը ապացուցանում են մեր վերանորոգված հիմնարկութիւնները և կարգերը, մեր լաւ դրութեան մէջ դրված ֆինանսները, մեր վերականգնված զինուորական հզօրութիւնը։ Ինչ ուզում են ասեն յաղթված կուսակցութիւնները, այնու ամենայնիւ դա իրողութիւն է. բայց դրա մասին մենք մի ուրիշ անգամ կը խօսենք։ Բացի այդ, կենսական ոյժերի հարստութեան այդ զարմանալի ապացոյցը վերադարձրեց Ֆրանսիային ամբողջ աշխարհի համակրութիւնը և զարմանքը և մինչև անգամ մի քանիսի նախանձը շարժեց։ Ուրեմն մենք կարող ենք համարձակ ասել, որ այս տաս տարիների ընթացքում Ֆրանսիան վերաստեղծվեցաւ թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Նա վերաստեղծվեցաւ հանրապետական դրօշակի տակ, հանրապետական սկզբունքի ոյժով, ժողովուրդի օգնութեամբ որ վերջնականապէս իր ձեռքն առաւ երկրի բոլոր գործերը, ուրեմն այդպիսով ամենքի և իւրաքանչիւրի գործեր դարձան։ Եւ այդ իրողութիւնը այնքան ակներև է, այնքան աչքի է ընկնում, որ մինչև անգամ հանրապետութեան հակառակորդները, նրա թշնամիները և անտարբերները սկսում են համոզվել, որ Ֆրանսիայի համար առանց հանրապետական կառավարութեան ոչ ապագայ կարող է լինել, ոչ յոյսեր, ոչ զարգացումն և ոչ աճումն։ Ցեսնո՞ւմ էք դուք այդ զզվված հին կուսակցութիւններին։ Ցեսնո՞ւմ էք դուք այդ ճանապարհը, որ ծածկված է միապետութեան ողորմելի աւերակներով։ Դեռ ևս տաղանդի փայլ, փառաւոր անցեալի ազդեցութիւն ունեցող մարդիկ յանձնեցին իրանց դրօշակների ցնցոտիները անընդունակ և անզօր մարդկերանց։ Այո, հանրապետական կարգերը և հանրապետական ոյժը անյաղթելի են դարձել։ Ոչինչ նշանակութիւն չունի այն հանգամանքը, որ մի քանի նահանգների մէջ յաղթութիւնը խլվում է ձեր հաւատարիմ ներկայացուցիչների ձեռքից. հաւատացէք, որ, երբ կլսենք հակառակ կողմերի ոյժերը չափել, կը տեսնենք, որ հանրապետութեան հակառակորդների կողմը մի քանի օգիցերներ միայն մնացել են, իսկ զլխաւոր ոյժերը զինուորները հանրապետութեան կողմն են։ Տեսնելով հանրապետութիւնը, որ այդքան հրաշքներ է գործել, որ հնազանդեցրել է